Պատվավոր դոկտորի կոչումներ արտերկրի գիտնականներին

ՀՀ ԳԱԱ նախագահությունը հերթական նիստում ակադեմիայի պատվավոր դոկտորի կոչում է շնորհել արտերկրի մի խումբ գիտնականների, որոնք զգալի վաստակ ունեն գիտության զարգացման և երիտասարդ հետազոտողների պատրաստման գործում:

Պատվավոր դոկտորի կոչման են արժանացել ֆրանսիական «Ալքաթել» ընկերության նախագահ և գործադիր տնօրեն, «Նովել էկոնոմիստի» կողմից «Տարվա լավագույն կառավարչի» մրցանակի արժանացած, «Պատվո լեգեոնի» ասպետ, հայազգի Սերժ Չորուքը (Չյոտիքրիշյան), համակարգչային գիտության ականավոր մասնագետ, ԱՄՆ-ի Ստանֆորդի համալսարանի պրոֆեսոր, «Համակարգչային ծրագրավորման արվեստը» բազմահատորյակի և «Համակարգիչները և տպագրությունը» հինգհատորյակի հեղինակ, Սանկտ-Պետերբուրգի համալսարանի պատվավոր դոկտոր Դոնալդ Կնութը, աշխարհահռչակ հոգեբույժ-գիտնական, ԱՄՆ-ի Կալիֆոռնիայի Սան Դիեգո քաղաքի մտածողության միջազգային կենտրոնի տնօրեն, Համաշխարհային հոգեբուժական ասոցիացիայի Ժան Դիլեյի անվան մրցանակի դափնեկիր, Ֆրանսիայի բժշկական գիտությունների ազգային ակադեմիայի անդամ, պրոֆեսոր Հակոբ Ակիսկալը, ճանաչված գիտնական, ԱՄՆ-ի Լոս Ալամոսի Ազգային լաբորատորիայի գիտական խորհրդի անդամ, Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի (ՄԳՏԿ) փորձագետ, պրոֆեսոր Ներսես Կրիկորյանը, որ մեծ ավանդ ունի միջուկային պրոցեսների քիմիայի բնագավառում և անգնահատելի օժանդակություն է ցուցաբերել Հայաստանի գիտնականներին: Պատվավոր դոկտորի կոչում է շնորհվել նաև Ճապոնիայի Աիչի Սանգյո համալսարանի գործարար միջավայրի դեպարտամենտի դեկավար, իրավագիտության դոկտոր-պրոֆեսոր Սեգավա Հիրոյոշիին՝ նկատի ունենալով նրա մեծ ավանդը իրավագիտության և Հայոց ցեղասպանության ուսումնասիրության ասպարեզում: